

Հայաստանի Հանրապետությունում իրավիճակի փոփոխությունները

2013թ. սեպտեմբերի 3-ից հետո

Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին զարգացումների համար շրջադարձային նշանակություն ունեցավ 2013թ. սեպտեմբերի 3-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հրավերով ՌԴ կատարած աշխատանքային այցի արդյունքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից հապճեպ կայացված որոշումը, որով Հայաստանը հայտարարեց Մաքսային միությանը և դրա հիման վրա ստեղծվող Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու մասին: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հետագայում խոստովանեց, որ այդ որոշումը կայացվել էր «մեկ գիշերվա ընթացքում», և խորհրդակցությունների համար ժամանակ չկար: Մինչդեռ կայացված որոշմամբ Հայաստանը հրաժարվեց Եվրոպական միության արևելյան գործընկերության ասոցացման համաձայնագրի ստորագրումից, որի շուրջ 3 տարի շարունակ բանակցություններ էին ընթանում, և այն նախաստորագրման շեմին էր:

2013թ. աշնանը Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը ևս Ռուսաստանի ճնշման արդյունքում չստորագրեց Եվրոպական միության արևելյան գործընկերության ասոցացման համաձայնագիրը, որը Ուկրաինայի հանրության կողմից շատ ավելի կոշտ արձագանքի հանդիպեց՝ հանգեցնելով լայնածավալ ցույցերի և հեղափոխության, որը ստացավ «Եվրամայդան» անվանումը: Մինչդեռ Հայաստանում եվրասոցացումից հրաժարվելու՝ իշխանությունների որոշումը նման հանրային արձագանք չստացավ: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» ՀԿ-ի (APR Group) կողմից 2014թ. իրականացված հարցման արդյունքների համաձայն՝ հարցվածների 38 տոկոսը կողմ է եղել Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամագրվելուն և միայն 25 տոկոսն է կողմ եղել Եվրամիությանը անդամակցելուն: Նկատենք, որ հաջորդող երեք տարիների ընթացքում այս պատկերը փոխվել է. 2017թ. հարցման արդյունքների համաձայն՝ ՀՀ բնակչության 33 տոկոսն է կողմ Եվրոպական միությանն անդամակցելուն և 32 տոկոսն է կողմ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությանը:¹

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու վերաբերյալ իշխանությունների հիմնավորումները

Իշխանությունները Հայաստանի Հանրապետության՝ ԵԱՏՄ-ին անդամակցելը հիմնավորվում էին անվտանգության ապահովման նկատառումներով, չնայած ԵԱՏՄ-ն պաշտոնապես հանդիսանում է տնտեսական համագործակցության կառույց՝ միասնական մաքսային գոտով, որի որևէ անդամ պետության հետ (Ղազախստան, Բելառուս, Ռուսաստանի Դաշնություն), սակայն, Հայաստանի Հանրապետությունն ընդհանուր պետական սահման չունի: Ավելին՝ ՀՀ-ի անվտանգության խնդիրները պետք է կարգավորված լինեին ինչպես ՌԴ - ՀՀ միջպետական

¹ Դեպի Յուլսի՞ս, թե՞ Արևմուտք դիրքորոշումներ. Հասարակական կարծիքի ուսումնասիրության արդյունքներ, <http://hcav.am/publications/դեպի-հյուսիս-թե-արևմուտք-դիրքորոշ>



ռազմավարական պայմանագրերով, այնպես էլ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) շրջանակներում: Այսինքն՝ անվտանգության ապահովման համար մեխանիզմներ արդեն իսկ առկա էին, և անվտանգության նկատառումներով նորաստեղծ տնտեսական կառույցին անդամագրվելը ավելի շուտ վկայում է չանդամակցելու դեպքում Ռուսաստանի Դաշնությունից հնարավոր սպառնալիքների մասին: Նման սպառնալիքների իրատեսականությանը ակնատես եղանք Ուկրաինայի արևելքի նկատմամբ ՌԴ-ի ագրեսիայի և Ղրիմի բռնակցման փաստերով:

Սահմանադրական փոփոխություններ

Մաքսային միությանն անդամակցելու վերաբերյալ 2013թ. սեպտեմբերի 3-ին կայացված որոշման հաջորդ օրը՝ սեպտեմբերի 4-ին, Սերժ Սարգսյանը հայտարարեց սահմանադրական փոփոխությունների իրականացման մասին և ստորագրեց Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին որոշումը:² 9 հոգուց բաղկացած հանձնաժողովի կազմում ընդգրկված էին իշխանամետ պաշտոնյաներ և փորձագետներ, ներառված չէին ոչ իշխանական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, այսինքն՝ այն չէր ապահովում իրական բազմակարծություն: Հարկ է նշել, որ սահմանադրական փոփոխություններ իրականացնելու օրակարգը անսպասելի էր հանրության համար, քանի որ բառացիորեն յոթ ամիս առաջ՝ 2013թ. փետրվարի նախագահական ընտրությունների ժամանակ, Սերժ Սարգսյանն իր նախընտրական ծրագրում նման դրույթ չէր ներառել և անգամ չէր ակնարկել սահմանադրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտության մասին:

2015թ. հուլիս-օգոստոս ամիսներին երկար լուրջությունից հետո հանրությանը երկու մասով ներկայացվեց Սահմանադրական փոփոխությունների նախագիծը, որը սեպտեմբերին ընդունվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից: Փոփոխություններին ծանոթանալու և դրանց քննարկման համար հանրությունն ունեցավ ընդամենը երկու ամիս ժամանակ, ընդ որում՝ պասիվ, արձակուրդային ժամանակահատվածում: Նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովում հանրային քննարկում կազմակերպվեց միայն մեկ օր, իսկ պատգամավորների կողմից նախագծի շուրջ բուն քննարկումները տևեցին ընդամենը չորս օր:³

2015թ. դեկտեմբերի 6-ին անցկացվեց ՀՀ Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն, որի քարոզչության և բուն քվեարկության ընթացքը ուղեկցվեց լրջագույն և լայնածավալ խախտումներով, որոնց թվում էին ուռձացված ընտրացուցակները, վարչական ռեսուրսի կազմակերպված և զանգվածային չարաշահումները, այլ անձի փոխարեն և բազմակի քվեարկության, ընտրակաշառքի բազմաթիվ դեպքերը:⁴ Այդուհանդերձ, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հանրաքվեն համարվեց կայացած, և այս պարտադրված սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կիսանախագահականից անցում

² ՀՀ Նախագահի հրամանագիրը ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hramanagir.pdf>

³ ՀԶԱ Վանաձորի գրասենյակի գեներալականը ՀՀ Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ, <http://hcav.am/publications/23-09-2015-05/>

⁴ ՀԶԱ Վանաձորի գրասենյակի գեներալը՝ պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ, <http://hcav.am/publications/21-01-2016-555879/>



կատարեց խորհրդարանական կառավարման համակարգի: Փոփոխությունների առանցքում էր սահմանադրությամբ կայուն խորհրդարանական մեծամասնության ինստիտուտի ամրագրումը, որը հետագայում ընդունված ընտրական օրենսգրքով կարող է ձևավորվել առավելագույնը երեք քաղաքական ուժի կողմից:

Սահմանադրությամբ պետական և տեղական իշխանության մարմինների ձևավորման կարգի փոփոխությունների արդյունքում կրճատվեց քաղաքացիների կողմից ընտրվող մարմինների և հետևաբար՝ ընտրությունների թիվը: Այլևս Հայաստանի Հանրապետության նախագահը ընտրվում է Ազգային ժողովի կողմից: Նույն սկզբունքով Հայաստանի երեք ամենամեծ քաղաքներում բնակիչներն ընտրում են միայն համայնքի ավագանի (կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների): Ավագանին էլ իր հերթին ընտրում է համայնքի ղեկավարին: Այս փոփոխությունը լուրջ մարտահրավեր է ժողովրդավարությանը և ընտրական ինստիտուտի զարգացմանը, քանի որ սահմանադրական փոփոխություններով էականորեն սահմանափակում է քաղաքացիների՝ իշխանությունների ձևավորման իրավունքը: Բացի դրանից՝ նոր Ընտրական օրենսգիրքը բնութագրում է մանդատների միջոցով անհարկի առավելություն է տալիս քվեների մեծամասնությունը ստացած ուժին, ընդ որում՝ տեղական ինքնակառավարման ընտրությունների դեպքում բնութագրում է մանդատներ ստանալու համար բավարար է ստանալ քվեների 40 տոկոսը:

Սահմանադրական փոփոխություններով հետընթաց արձանագրվեց նաև սոցիալական, տնտեսական, մշակութային իրավունքների պաշտպանության մեխանիզմների հարցում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիները զրկվեցին այդ իրավունքների խախտումների դեպքում Սահմանադրական դատարան դիմելու իրավունքից: Ավելին՝ նույնիսկ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը չի կարող դիմել Սահմանադրական դատարան քաղաքացիների սոցիալական, աշխատանքային և առողջական իրավունքների խախտման դեպքերում: Այս սահմանափակումը հակասում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Եվրոպայի խորհրդի վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի դրույթներին:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրացում

2016թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեյջանի շփման գծում լայնածավալ պատերազմական գործողություններ սկսվեցին, որոնք ի չիք դարձրին անվտանգության նկատառումներով ԵԱՏՄ-ին անդամակցելու՝ իշխանության ներկայացրած հիմնավորումները: Ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվում զոհվեց 77 զինծառայող, իսկ ամբողջ ապրիլ ամսվա ընթացքում զոհվածների թիվը կազմեց 111: Ընդ որում՝ զգալի թվով զոհերի պատճառներից են եղել զինամթերքի ոչ պատշաճ մատակարարումը, հետախուզական տվյալների ոչ ժամանակին օգտագործումը, զինտեխնիկայի անսարքությունը:⁵ Պատերազմական գործողություններից հետո հրապարակումներ եղան զինված ուժերում առկա կոռուպցիոն ռիսկերի և հանցագործությունների մասին: 2017թ. մարտին նույնիսկ վարչապետ Կարեն Կարապետյանը ՀՀ Ազգային ժողովում հայտարարեց, որ Ապրիլյան պատերազմի ժամանակ ռազմական տեխնիկան շատ դեպքերում

⁵ Չեկույց 2016թ. ապրիլին պատերազմական գործողությունների ընթացքում մահացած զինծառայողների մահվան հանգամանքների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության վիճակի մասին, Յեյսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, <http://hcav.am/wp-content/uploads/2016/11/Չեկույց-մահացած-զինծառայողների-մահվան-հանգամանքների-և-նրանց-ընտանիքների-վիճակի-մասին.pdf>



հնարավոր չի եղել գործարկել անորակ դիզվառելիքի պատճառով: Ապրիլյան պատերազմից հետո եղան որոշ պաշտոնանկություններ և հարուցվեցին քրեական գործեր, սակայն չարաշահումների և հանցագործությունների համակողմանի քննություն, դեպքերի լիարժեք բացահայտում և բոլոր մեղավորների պատասխանատվության ենթարկում այդպես էլ տեղի չունեցավ:⁶ ՀՀ Կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ ստեղծվել է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, որը նախագահում է ՀՀ վարչապետը, իսկ կազմում ընդգրկված են բարձրաստիճան պաշտոնյաններ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: 2017թ. հունիսին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց կոռուպցիայի կանխարգելման հարցերով նոր մարմնի ստեղծման և նոր մեխանիզմների ներդրման մասին օրենքների փաթեթ: Մինչդեռ իշխանությունների ձեռնարկած հակակոռուպցիոն քայլերը դեռևս շոշափելի արդյունքներ չեն չտվել, և հանրությունը դրանց թերահավատությամբ է վերաբերում:

Ապրիլյան պատերազմից հետո երկրում առավել ուժեղացավ ռազմականացման հռետորաբանությունը: 2016թ. հոկտեմբերին Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի կողմից առաջ քաշվեց հասարակության և բանակի կապի ամրապնդման Ազգ-բանակ հայեցակարգը, որի շրջանակներում ներկայացվեցին պարտադիր ժամկետային ծառայության նոր պայմաններ: Ներկայացվեց նաև 2017թ. հունվարի 28-ից սկսած գոհված կամ վիրավորված զինծառայողների ընտանիքներին խոշոր դրամական փոխհատուցում տրամադրելու ծրագիր, որի համար ՀՀ քաղաքացիները համապատասխան հիմնադրամին պետք է յուրաքանչյուր ամիս պարտադիր կերպով վճարեն 1000-ական ՀՀ դրամ: Հանրության շրջանում գոհված կամ վիրավորված զինծառայողների ընտանիքներին փոխհատուցվելիք գումարների հայթայթման մեխանիզմի հետ կապված բազմաթիվ առարկություններ կային: Մասնավորապես, առաջ էր քաշվում հսկայական ծավալների հասնող ստվերային տնտեսության կրճատման կամ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունքում անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթման ճանապարհը: Բացի դրանից՝ առաջարկվող ծրագիրը խտրական մոտեցում է դրսևորում մինչ 2017թ. հունվարի 28-ը հրադադարի հետևանքով գոհված կամ վիրավորված զինծառայողների նկատմամբ, որոնք զրկված են հիմնադրամի միջոցներից աջակցություն ստանալու իրավունքից:

Ռազմականացման հռետորաբանությունն ուղեկցվում է Հայ առաքելական եկեղեցու՝ Սահմանադրական փոփոխություններով ամրագրված բացառիկ դերի ճանաչմամբ: 2017թ. սեպտեմբերի 11-ին, ի պատասխան լրագրողի հարցին, ՀՀ ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը հայտարարել է, որ «Հայաստանում լավագույն ներդրումը եկեղեցիների կառուցման մեջ կատարվող ներդրումն է»: Հետագայում նա նաև հայտարարել է, որ Հայաստանն ի գորու չէ ապահովելու իր անվտանգությունը, ըստ այդմ՝ հայ-ռուսական համատեղ գորքերի ստեղծումն անխուսափելի է:

Ընտրական օրենսգիրք և ընտրություններ

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում մշակված նոր Ընտրական օրենսգրքի նախագիծը առաջին անգամ հասանելի դարձավ 2016թ. փետրվարի 22-ին Վենետիկի հանձնաժողովի

⁶ Տեղեկանք: Ապրիլյան պատերազմական գործողություններից մեկ տարի անց, Զելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, <http://hcav.am/publications/25-04-2017-003/>



պաշտոնական կայքում՝ անգլերեն լեզվով, և միայն մարտի 3-ին հայերեն տարբերակը հրապարակվեց ՀՀ Կառավարության կայքում:

Ի տարբերություն սահմանադրական փոփոխությունների և ընտրական օրենսգրքի նախագծի նախնական մշակմանը, որոնք իրականացվեցին նեղ իշխանական շրջանակներում, ընտրական օրենսգրքի հետագա լրամշակման փուլում ավելի լայն մասնակցություն ապահովվեց: Աժ ընդդիմադիր ՀԱԿ խմբակցության պատգամավոր Լևոն Զուրաբյանի առաջարկով օրենսգրքի շուրջ իշխող կուսակցության, ընդդիմության և քաղաքացիական հասարակության միջև 4+4+4 ֆորմատով սկսվեցին բանակցություններ, որոնց արդյունքում ընտրական օրենսգրքում տեղ գտան ընդդիմության և քաղաքացիական հասարակության մի շարք առաջարկներ՝ հիմնականում վարչարարական բնույթի, սակայն առավելապես քաղաքական նշանակության և ձևավորվելիք խորհրդարանում ուժերի հարաբերակցության վրա ազդեցություն ունեցող հարցերում իշխանությունն այդպես էլ զիջումների չգնաց: Հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները միայն սկզբնական շրջանում են մասնակցել բանակցություններին և չեն ստորագրել իշխանության և ընդդիմության միջև ձեռք բերված համաձայնությունները:

2016թ. մայիսին ընդունված ընտրական օրենսգրքով էական սահմանափակումներ սահմանվեցին դիտորդների և ՋԼՄ ներկայացուցիչների համար: Մասնավորապես, տեղամասային ընտրական հանձնաժողովին տրվեց տեղամասում ներկա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և ՋԼՄ ներկայացուցիչների առավելագույն թիվ սահմանելու իրավունք, դիտորդական կազմակերպությունների համար սահմանվեց նվազագույնը վերջին 1 տարում կանոնադրական նպատակներում մարդու իրավունքների և ժողովրդավարության մասին դրույթ ունենալու պահանջ, ՋԼՄ-ների համար սահմանվեց հավատարմագրման պահանջ՝ ներկայացուցիչների սահմանափակ թվով (ողջ հանրապետությունում մեկ ՋԼՄ-ն կարող է ունենալ առավելագույնը 50 ներկայացուցիչ): Նոր ընտրական օրենսգրքով նաև սահմանվեց, որ հանձնաժողովի անդամները կարող են դիտորդներին, ՋԼՄ ներկայացուցիչներին և վստահված անձանց քվեարկությամբ հեռացնել տեղամասից:

Հատկանշական է, որ Ընտրական օրենսգրքով հասարակական կազմակերպությունները հանդիսանում են քաղաքացիական վերահսկողության, մասնավորապես դիտորդության իրականացման հիմնական սուբյեկտ, սակայն ընտրական հանձնաժողովի գործողությունները/անգործությունը, ընտրությունների արդյունքները բողոքարկելու և այլ բողոքներ ներկայացնելու իրավունք չունեն:

Օրենսգրքով լայնացավ ընտրական իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, քանի որ թեթև և միջին ծանրության հանցանք գործած և պատիժը կրող անձանց և արտերկրում ուսում ստացող զինվորականներին տրվեց ընտրելու իրավունք, սակայն այդ հնարավորությունը չտաժարվեց արտերկրում բնակվող մեծ թիվ կազմող՝ առնվազն 450-500 հազար Հայաստանի Հանրապետության մյուս քաղաքացիների վրա:

Սահմանվեց ընտրությունների առաջին փուլից հետո կոալիցիա կազմելու հնարավորություն, սակայն առավելագույնը երեք կուսակցության կամ դաշինքի կողմից: Ընտրական օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի առանցքային առաջարկներից էր վերանայել կոալիցիայի



անդամների թվի սահմանափակման մասին դրույթը, սակայն իշխանություններն այս հարցում մնացին անդրդվելի:⁷

Ամիսներ անց ընդունված փոփոխություններով ԸՕ-ում նախատեսվեց նաև ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակում, որը ընդդիմության և քաղաքացիական հասարակության երկար տարիների պահանջն էր: Քաղաքացիներին տրվեց այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում ներկայացնելու իրավունք, միևնույն ժամանակ այդպիսի դիմում ներկայացնելու համար ՀՀ Քրեական օրենսգրքով նախատեսվեց սուտ մատնության հողված: Ըստ ՀՀ ԿԸՀ 2017թ. ապրիլի 2-ի Ազգային ժողովի ընտրությունների մասին հաղորդման՝ ընդամենը մեկ քաղաքացի է այլ անձի փոխարեն քվեարկության մասին դիմում ներկայացրել, ինչի պատճառներից մեկը կարող էր հանդիսանալ նաև վերոնշյալ հողվածը, թեև հանրայնորեն ընդունված կարծիք կա, որ այս ընտրությունների ժամանակ այլ անձի փոխարեն կամ բազմակի քվեարկության դեպքերը զգալի չեն եղել, և իշխանությունները առավելապես գործի են դրել վարչական ռեսուրսի չարաշահման և ընտրակաշառքի մեթոդները:

Սահմանադրական փոփոխություններով սահմանված համամասնական ընտրակարգը ըստ էության խեղաթուրվեց Ընտրական օրենսգրքով տարածքային ցուցակների ներդրմամբ, որոնք առաջադրված ուժերին հնարավորություն են տալիս առանձին վայրերում ազդեցություն և լծակներ ունեցող անհատների միջոցով առավել մեծ թվով ձայներ ստանալ: Տարածքային ցուցակները վարչական ռեսուրսի, աշխատանքային իրավունքների չարաշահման և ընտրակաշառքի բաժանման հետ միասին հանդիսացան 2017թ. ապրիլի 2-ին իշխող կուսակցության հաղթանակի գրավականը: Մեծ ծավալների հասնող արտագաղթի և աղքատության պայմաններում Հայաստանի հանրապետական կուսակցությունը ստացավ քվեարկությանը մասնակցած ընտրողների ձայների շուրջ 50 տոկոսը՝ նոր ձևավորված Ազգային ժողովում կազմելով մեծամասնություն: Շուրջ 20 տարի իշխանությունում լինելու և դրա արդյունքում իր ձեռքում կենտրոնացրած հսկայածավալ ռեսուրսների միջոցով միայն դրամական միջոցներով առաջադրված մյուս բոլոր կուսակցություններին միասին երեք անգամ գերազանցող Հայաստանի Հանրապետական կուսակցությունը դարձավ փաստացի գերիշխող ուժը:⁸

2017թ. ապրիլի 2-ի Ազգային ժողովի և մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ արձանագրվեցին դիտորդության ինստիտուտի չարաշահման՝ կեղծ դիտորդության համատարած դեպքեր: Ազգային ժողովի ընտրությունները դիտարկելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրվել էր 49 կազմակերպության շուրջ 28000 դիտորդ, որոնց ճնշող մեծամասնությունը տեղամասերում իրականացնում էր վստահված անձի գործառույթ՝ հիմնականում ներկայացնելով իշխող Հանրապետական կուսակցության կամ «Ծառուկյան» դաշինքի շահերը:

2016թ. փետրվարի 24-ին Հայաստանի հանրապետական կուսակցության և Հայ հեղափոխական դաշնակցության միջև կնքվեց քաղաքական համագործակցության մասին

⁷ Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների հանձնարարականների արտացոլումը ՀՀ Ընտրական օրենսգրքում, <http://hcav.am/publications/16-02-2017-07/>

⁸ «Անկախ դիտորդ» դաշինք, ՀՀ Ազգային ժողովի 2017թ. ապրիլի 2-ի ընտրություններ, Վերջնական զեկույց, <http://hcav.am/publications/19-7-17-3/>



համաձայնագիր, իսկ 2017թ. խորհրդարանական ընտրություններից հետո՝ մայիսի 11-ին, երկու կուսակցությունները կոալիցիա կազմեցին: Հատկանշական է, որ ՀՅԴ-ն ազգայնական գաղափարախոսություն ունեցող կուսակցություն է, որը դեմ է հայ-թուրքական հաշտեցման գործընթացներին և ցեղասպանության միջազգային ճանաչման ջատագովն է: Հենց այս դրդապատճառներով էր 2009թ. ՀՅԴ-ն դուրս եկել իշխանական կոալիցիայից, երբ օրակարգ մտավ հայ-թուրքական արձանագրությունների հարցը:

Մարդու իրավունքների պաշտպանության անպաշտպանություն

2016թ. սկզբին, առանց որևէ պաշտոնական հիմնավորում ներկայացնելու, հրաժարական տվեց ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը: Հարկ է նշել, որ 2015թ. աշնանը ՀՀ Ազգային ժողովում ՄԻՊ տարեկան զեկույցի ներկայացման ժամանակ ՀՀԿ պատգամավորները, մասնավորապես պատգամավոր Սամվել Ֆարմանյանը սուր քննադատության արժանացրին Կարեն Անդրեասյանին՝ հասցնելով նաև անձնական վիրավորանքներ: Վերջինիս հրաժարականը ցույց տվեց Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի խոցելիությունը: Տեղին է հիշեցնել, որ ՀՀ ՄԻՊ Կարեն Անդրեասյանի կողմից 2013թ. դեկտեմբերի վերջին հրապարակվեց փաստերի և ուսումնասիրությունների հիման վրա դատարաններում կոռուպցիայի տարածվածության և դատավորների անկախության բացակայության մասին զեկույցը, որը կոշտ քննադատության արժանացավ թե՛ ՀՀ Գլխավոր դատախազության, թե՛ ՀՀ Ազգային ժողովի հանրապետական խմբակցության, և թե՛ դատավորների կողմից: Այդպես էլ չքննարկվեցին և չքննվեցին զեկույցում դատական իշխանության վիճակի վերաբերյալ ներկայացված փաստերը և մտահոգությունները:

Ազգային ժողովի կողմից ՀՀ Մարդու իրավունքների նոր պաշտպանի նշանակումից հետո խիստ մտահոգիչ է մարդու իրավունքների տարբեր բնագավառներում, մասնավորապես՝ երեխաների իրավունքների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության և վերահսկողական մեխանիզմների կենտրոնացումը ՄԻՊ-ի կողմից, որին զուգահեռ նեղացվում են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ կառույցների գործունեության հնարավորությունները, և վերացվում է մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների բազմազանությունը: Հաշվի առնելով, որ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ներդրումից հետո բոլոր պաշտպանները քաղաքական և գործադիր իշխանության ճնշումների արդյունքում հրաժարական են տվել մինչ իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտը, մեկ անձի ձեռքում մարդու իրավունքների բոլոր բնագավառների պաշտպանության մեխանիզմների կենտրոնացումը՝ մոնոպոլացումը, խիստ խոցելի է դարձնում և՛ Մարդու իրավունքների պաշտպանին, և՛ մարդու իրավունքների պաշտպանությունը:

2016թ. դեկտեմբերի 16-ին երկարատև քննարկումներից հետո ընդունվեց Հասարակական կազմակերպությունների մասին օրենքը, որով կազմակերպություններին վերապահված է հանրային շահը ներկայացնել դատական ատյաններում, սակայն միայն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանը 2010թ. սեպտեմբերի 7-ի որոշմամբ ճանաչել է ՀՀ դատական ատյաններում հանրային շահը ներկայացնելու ՀԿ-ների իրավունքը՝ առանց որևէ սահմանափակման: Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի հետ կապված մեկ այլ ռիսկ էր նաև այն, որ նախագծով ի սկզբանե նախատեսվում էր պետության կողմից բոլոր ՀԿ-ների



Ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն, սակայն քննարկումների արդյունքում այն տարածվեց միայն պետության կողմից ֆինանսավորում ստացող ՀԿ-ների վրա: Ներկայումս, շրջանավորում է Կամավորության մասին օրենքի մի նախագիծ, որը փորձում է կրկին լրացուցիչ հաշվետվողականության պահանջներ ներկայացնել հասարակական կազմակերպություններին և անհարկի սահմանափակում և կանոնակարգում է կամավորական գործունեությունը և հնարավորությունները:

«Սասնա ծռեր» խմբի անդամների դատավարության ընթացքում (խմբին կանդիդատանք ստորև) իրավապաշտպանության ինստիտուտի տարբեր օղակների, մասնավորապես՝ փաստաբանների, քրեակատարողական հիմնարկներում հասարակական դիտորդական խմբի նկատմամբ էական սահմանափակումներ արձանագրվեցին: Մինչ «Սասնա ծռեր» խմբի անդամների ինքնակամ հանձնվելը ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբին ապօրինի կերպով արգելվեց հանդիպել Վարդաշեն քրեակատարողական հիմնարկում կալանավորված քաղաքնադատական ժիրայր Սեֆիյանի հետ: Դիտորդական խմբի անդամներին հետագայում արգելվեց հանդիպել նաև Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում գտնվող «Սասնա ծռեր» խմբի անդամներին, երբ տեղեկություններ հրապարկվեցին այն մասին, որ խմբի անդամները 2017թ. հունիսի 28-ին Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում բռնության են ենթարկվել:

Հարկ է նշել նաև, որ նախորդ արդարադատության նախարարի պաշտոնավարման ընթացքում նախագիծ ներկայացվեց, որով առաջարկվում էր, որ քրեակատարողական հիմնարկներում հասարակական դիտորդական խմբի նոր անդամները ընդունվեն Արդարադատության նախարարության կողմից, մինչդեռ խմբի կանոնադրությամբ նոր անդամներին խումբն է ընդունում: Առաջարկը չընդունվեց, սակայն այն Դիտորդական խմբի գործունեության և անկախության սահմանափակման ռիսկ էր պարունակում:

Ինչ վերաբերում է «Սասնա ծռեր» խմբի անդամների փաստաբաններին, ապա դատարանում նրանց մինչ նիստերի դահլիճ մտնելը փորձում էին ապօրինաբար խուզարկության ենթարկել, որին փաստաբաններն ընդդիմանում էին, արդյունքում դատարանը որդեգրել է Խմբի անդամների փաստաբանների նկատմամբ սանկցիաներ կիրառելու և նրանց հանրային պաշտպաններով փոխարինելու մարտավարություն, որը նրանց արդյունավետ պաշտպանության էականորեն նվազեցման ռիսկեր է պարունակում: Փաստաբանական համայնքի նկատմամբ ճնշումներ են գործադրվում նաև նրանց նկատմամբ կասկածելի հիմնավորումներով կարգապահական վարույթներ հարուցելու միջոցով:

Հետապնդումներ քաղաքական ընդդիմության նկատմամբ

ԵԱՏՄ-ին միանալու որոշմանը հաջորդեց քաղաքական հետապնդումների և բանտարկությունների առաջին ալիքը:



2013թ. հոկտեմբերի 31-ին Շանթ Հարությունյանը մի խումբ համակիրների հետ Երևանի Ազատության հրապարակում նստացույց սկսեց «արժեքների հեղափոխության» իրականացման մտադրությամբ: Նոյեմբերի 5-ին՝ Գայ Ֆոքսի միջազգային օրը, խմբի կողմից նախաձեռնված երթի ընթացքում ոստիկանների կողմից կազմակերպված սադրանքների հետևանքով բախումներ առաջացան երթի մասնակիցների և ոստիկանների միջև, ինչի արդյունքում 38 հոգի բերման ենթարկվեց, որոնցից 14-ը կալանավորվեցին⁹: 2014թ. հոկտեմբերի 17-ին հրապարակված դատավճռով Շանթ Հարությունյանը և ընկերները դատապարվեցին մինչև 7 տարվա ազատազրկման:

10

2014թ. գարնանը Ժիրայր Սեֆիլյանի ղեկավարած «Նախախորհրդարան»-ը մեկնարկեց «100-ամյակն առանց ռեժիմի» նախաձեռնությունը, որը հավակնում էր քաղաքացիական անհնազանդության միջոցով հասնել իշխանափոխության մինչև Հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցը: Ձևավորումից ի վեր այս խմբի անդամները ենթարկվել են բռնությունների և հետապնդումների, ընդհուպ մինչև ապօրինի քրեական գործերի հարուցում և կալանք:

2014թ. վերջին տեղի ունեցան խմբի անդամների կամ համակիրների ավտոմեքենաների հրկիզման մի շարք դեպքեր, որոնք այդպես էլ չբացահայտվեցին: 2015թ. սկզբին Նախախորհրդարանի հիման վրա ձևավորվեց Հիմնադիր Խորհրդարանը: 2015թ. հունվարի 31-ին Բերձորի մոտ ոստիկանական մեքենաներով անձինք շրջապատեցին և դաժան ծեծի ենթարկեցին «100-ամյակն առանց ռեժիմի» նախաձեռնության մասին իրազեկման ավտոերթի մասնակիցներին, ովքեր ուղևորվել էին դեպի Լեռնային Ղարաբաղ: 2015թ. մարտի 26-ին Ժիրայր Սեֆիլյանը հայտարարեց ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում հարգանքի տուրք մատուցելուց հետո շուրջօրյա, անժամկետ և խաղաղ բողոքի ակցիաներ սկսելու մասին: Երկու օր անց Գյումրիում կազմակերպված հավաքի ընթացքում դանակահարվեց Հիմնադիր Խորհրդարանի անդամ Հրաչյա Միրզոյանը:

Հիմնադիր խորհրդարանի անդամներին գլխավոր հարվածը հասցվեց 2015թ. ապրիլի 7-ին, երբ ՀՀ Քննչական կոմիտեն և ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը խուզարկություններ իրականացրին Հիմնադիր խորհրդարանի գրասենյակում և մի շարք անդամների բնակարաններում՝ առգրավելով հիմնականում տեղեկատվական կրիչներ: Խմբի անդամներից Վարուժան Ավետիսյանին, Պավել Մանուկյանին, Գևորգ Սաֆարյանին, Ժիրայր Սեֆիլյանին, Գարեգին Չուգասյանին մեղադրանք առաջադրվեց ՀՀ Քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով (Զանգվածային անկարգություններ նախապատրաստելը), և նրանք կալանավորվեցին: Հիմնադիր խորհրդարանի Գյումրու ներկայացուցիչ Արամ Հակոբյանի նկատմամբ մեղադրանք առաջադրվեց ՀՀ Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով (Անօրինական զենք, զինամթերք պահելը): Նրա նկատմամբ խափանման միջոց կիրառվեց 500 հազար ՀՀ դրամի չափով գրավը: 2015թ. մայիսի 4-ին դատախազության որոշմամբ Ժիրայր Սեֆիլյանի և մյուսների խափանման միջոցը փոխարինվեց չհեռանալու մասին ստորագրությամբ, սակայն քրեական գործը չկարճվեց:

⁹ Իրավապաշտպանների վիճակը Ջայաստանում 2013թ., Չեկույց, Յելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, <http://hcav.am/wp-content/uploads/2014/09/HRD-Arm-Final1.pdf>

¹⁰ Իրավապաշտպանների վիճակը Ջայաստանում 2014-2015թթ., Չեկույց, Յելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, <http://hcav.am/wp-content/uploads/2014/09/HRD-Arm-Final1.pdf>



2016թ. մայիսի 12-ին Ժիրայր Սեֆիլյանը լրատվամիջոցներին տված ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ դարաբաղա-ադրբեջանական բաժանարար գծի հյուսիս-արևելյան հատվածում հայկական ուժերը 7մլն մ² տարածք են կորցրել: Այս հայտարարությունից շուրջ մեկ ամիս անց՝ 2016թ. հունիսի 20-ին, Ժիրայր Սեֆիլյանը ձեռք բերեց և նրա նկատմամբ հարուցվեց քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի (Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) 2-րդ մասով: Ըստ ՀՀ Քնչական կոմիտեի տարածած հաղորդագրության՝ զենքը հայտնաբերվել է 2016թ. մայիսի 20-ին Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղում տեղի ունեցած վթարի մասնակից մեքենայում: Հարկ է նշել, որ ճանապարհատրանսպորտային այս պատահարի և դրանում մասնակից մեքենաներում զենքի հայտնաբերման մասին 2016թ. մայիսի 16-ին կամ հաջորդ օրերին որևէ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել ո՛չ ՀՀ Ոստիկանության, ո՛չ էլ ՀՀ Քնչական կոմիտեի կողմից:

2015թ. նոյեմբերի 25-ին ՀՀ Ազգային անվտանգության Ծառայությունը հայտարարություն տարածեց այն մասին, որ Երևան քաղաքի Նորք Մարաշ վարչական շրջանի տներից մեկում վնասագերծվել է Արթուր Վարդանյանի կողմից ստեղծված ահաբեկչական խմբավորումը, և առգրավվել են նրանց կողմից հավաքագրված զենքերը: Այս գործողություններին հաջորդեցին մի շարք ձեռքարկություններ, այդ թվում՝ պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Վահան Շիրխանյանի, «Հայրենիք և պատիվ» կուսակցության նախագահ Գառնիկ Մարգարյանի ձեռքարկությունը: Իրավապահ մարմինների գործողությունները ցուցադրող տեսանյութերի հրապարակումը զինված խմբի նկատմամբ առաջադրված մեղադրանքների հիմնավորվածության հետ կապված հանրության շրջանում լուրջ կասկածներ հարուցեց: Այս մտահոգություններն ավելի խորացան ծայրահեղ ծանր առողջական վիճակում շուրջ երկու տարի անազատության մեջ գտնվող Վահան Շիրխանյանի նկատմամբ իրականացվող դատավարության ընթացքով: Վերջինիս փաստաբան Հայկ Ալումյանի համոզված է, որ Շիրխանյանի առողջական վիճակը դիտավորությամբ է վատթարացվել:

Նախագահ Սերժ Սարգսյանի հրաժարականի և քաղաքատարկյալների ազատ արձակման պահանջով 2016թ. ամռանը Ղարաբաղյան պատերազմի վետերաններից և Հիմնադիր խորհրդարանի համակիրներից բաղկացած «Սասնա ծռեր» խումբը գրավեց Ոստիկանության ՊՊԾ գունդը: Խումբն օրեր շարունակ գունդն իր ձեռքում պահեց, այդ ընթացքում զոհվեց ոստիկանության 3 ծառայող, և վիրավորվեցին խմբի մի շարք անդամներ ու խմբին սատարող ցուցարարներ: Խումբն ի վերջո հանձնվեց իրավապահներին:

«Սասնա ծռեր» զինված խմբի կողմից ՀՀ Ոստիկանության ՊՊԾ գունդը գրավելուց հետո ոստիկանությունը ողջ հանրապետությունով մեկ հարյուրավոր քաղաքացիների ապօրինի բերման ենթարկեց ոստիկանական բաժիններ, որտեղ պահվեցին 10-ից 12 ժամ՝ զրկված լինելով իրավական աջակցություն և օգնություն ստանալու հնարավորությունից: Փաստաբաններին պարզապես արգելեցին հանդիպել իրենց կարիքն ունեցող ազատագրված անձանց հետ և խոչընդոտեցին նրանց մուտքը ոստիկանական բաժիններ:

2016թ. դեկտեմբերի 31-ի գիշերը Ազատության հրապարակում ոստիկանությունը խոչընդոտեց «Նոր Հայաստան» խմբի անդամների կողմից իրականացվող հավաքը: Ոստիկանի նկատմամբ



բռնություն կատարելու մեղադրանքով ձերբակալվեց, ապա կալանավորվեց Գևորգ Սաֆարյանը՝ ավելի ուշ դատապարտվելով երկու տարվա ազատազրկման: Մինչդեռ ակտիվիստի պնդմամբ Ոստիկանության հրեշտակների գումարտակի հրամանատար Գեղամ Խաչատրյանն է իր դեմ բռնություն գործադրել, որի դեմ հարուցված քրեական գործը կարճվեց:

Դեռևս 2012թ. մի շարք ոչ իշխանական քաղաքական ուժեր Հայ ազգային կոնգրեսի նախաձեռնությամբ սկսել էին քաղաքական ակտիվ գործունեություն ծավալել «բուրժուադեմոկրատական հեղափոխություն» իրականացնելու նպատակով: Սակայն այս նախաձեռնության անդամ քաղաքական ուժերը ոչ թե հակադրվեցին իշխանությունների Եվրասիական տնտեսական միությանն անդամագրվելու որոշմանը, այլ, ըստ էության, գտան, որ ՀՀ-ի՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամագրումն «անշրջելի է»: Այդ ուժերից ֆինանսական միջոցների և ռեսուրսների առումով առավել ազդեցիկը գործարար Գագիկ Ծառուկյանի «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն էր, որը հանդիսանում էր Ազգային ժողովում երկրորդ ամենամեծ խմբակցությունը: 2015թ. հունվարին Գագիկ Ծառուկյանը նախաձեռնեց հանրային լայն մասնակցությամբ համաժողով, որում քննարկվեց երկրում ստեղծված քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակը՝ փորձելով խնդիրների լուծման շուրջ համախմբվել:

Համաժողովից հետո՝ 2015թ. փետրվարին ՀՀԿ գործադիր մարմնի նիստի ժամանակ Սերժ Սարգսյանը ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանին որակեց որպես չարիք, հայտարարեց, որ նրան ազատել է ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի անդամությունից և պահանջեց, որպեսզի ուսումնասիրվեն Ազգային ժողովի նիստերից Գագիկ Ծառուկյանի բացակայության և նրա բիզնեսների հարկային պարտավորությունների կատարման հարցը: Արդյունքում մոտ մեկ ամիս անց Գագիկ Ծառուկյանը հայտարարեց կուսակցության նախագահի պաշտոնից հրաժարվելու և քաղաքականությունից հեռանալու մասին՝ մնալով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: Փաստորեն իշխանություն ունեցող քաղաքական կուսակցությունը մեկ այլ կուսակցության ղեկավարին ստիպեց հեռանալ և՛ կուսակցության ղեկավարի պաշտոնից, և՛ առհասարակ թողնել քաղաքականությունը: Իսկ ամիսներ անց ՀՀ Կառավարությունը հայտնեց, որ Գագիկ Ծառուկյանի բիզնեսի ստուգումների արդյունքում հարկային պարտավորությունների կատարման հետ կապված որևէ խախտում չի հայտնաբերվել:

Հարկ է նշել, որ 2017թ. խորհրդարանական ընտրություններին Գագիկ Ծառուկյանին թույլատրվեց վերադառնալ քաղաքականություն: Նա գլխավորեց «Ծառուկյան» դաշինքը, որը ընտրությունների արդյունքում վերստին դարձավ երկրորդ ամենամեծ խմբակցությունը Ազգային ժողովում:

Քաղաքացիական ընդվզում և դիմադրություն

Սերժ Սարգսյանի պաշտոնավարման երկրորդ փուլում արձանագրվեց նաև քաղաքացիական բավականին բարձր ակտիվություն, որը, սակայն, ճնշվում էր ոստիկանության և պետական այլ մարմինների կողմից: Քաղաքացիների կողմից կազմակերպվող բողոքի ակցիաները հիմնականում առնչվում էին հանրային կամ սոցիալական նշանակության տարբեր հարցերի, մասնավորապես, տրանսպորտի և էլեկտրաէներգիայի սակագների թանկացմանը, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմանը, մշակութային կոթոնների ապամոնտաժմանը և



ոչնչացմանը, բնապահպանական խնդիրներին և այլն:

2013թ. դեկտեմբերի 2-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից Հայաստան կատարած պետական այցի օրը մեծ թվով քաղաքացիներ Երևանում բողոքի ցույց իրականացրին ընդդեմ Մաքսային միությանը և ԵԱՏՄ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցությանը: Ոստիկանությունը բռնությամբ ցրեց ցույցը՝ բերման ենթարկվելով 110 խաղաղ ցուցարարի, որոնք ութ ժամ պահվեցին ոստիկանության բաժիններում՝ զրկված լինելով իրավաբանական օգնությունից կամ փաստաբանի դիմելու հնարավորությունից:¹¹

2015թ. ամառը նշանավորվեց «Էլեկտրիկ Երևանով»՝ էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ շուրջ երկու շաբաթ տևած ցույցերով: Հունիսի 23-ի առավոտյան՝ ժամը 5:00-ին, ոստիկանությունը ջրցան մեքենաների կիրառմամբ ցրեց Բաղրամյան պողոտայում խաղաղ նստացույցը: Ֆիզիկական բռնությունների կիրառմամբ բերման ենթարկվեց շուրջ 240 հոգի, բռնության ենթարկվեց 21 լրագրող և վնասվեց նրանց տեխնիկան: Ոստիկանական այս բռնություններից հետո նստացույցի մասնակիցների թիվը շեշտակի ավելացավ, սակայն հունիսի վերջին պառակտում տեղի ունեցավ ցուցարարների միջև և նրանց մի մասը, անսալով ոստիկանության հորդորին, գնաց Ազատության հրապարակ: Բաղրամյան պողոտայում նստացույցի մասնակիցների թիվը գնալով նվազեց և հուլիսի 6-ին ոստիկանությունը վերջնականապես ցրեց ցույցը: Թե՛ ցուցարարների, թե՛ նրանց նկատմամբ բռնություն գործադրած ոստիկանների նկատմամբ հարուցվեցին քրեական գործեր: Լրագրողների նկատմամբ բռնություն կիրառելու համար մեղադրանք առաջադրվեց 4 ոստիկանի, սակայն ոչ-ոք պատասխանատվության չի ենթարկվել մինչ այժմ:¹²

«Սասնա ծռեր» խմբի կողմից Ոստիկանության ՊՊԾ գունդը գրավելուց հետո՝ 2016թ հուլիսի 17-ից 31-ն ընկած ժամանակահատվածում, Երևանի Խորենացի փողոցում, Սարի թաղում և Ազատության հրապարակում բազմամարդ ցույցեր սկսվեցին, որոնց մասնակիցների նկատմամբ ոստիկանությունը հերթական անգամ կիրառեց բռնություններ, ապօրինի բերման ենթարկեց հարյուրավոր քաղաքացիների, հատուկ միջոցների կիրառմամբ դաժանաբար ցրեց ցույցերը: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2016թ. հուլիսի 17-ից օգոստոսի 4-ն ընկած ժամանակահատվածում բերման է ենթարկվել 775 քաղաքացի: 2016թ. հուլիսի 20-ին և 29-ին ոստիկանության կողմից հատուկ միջոցներ և աննախադեպ բռնություն է կիրառվել ցուցարարների նկատմամբ, որի արդյունքում մի շարք ցուցարարներ և լրագրողներ ստացել են լուրջ մարմնական վնասվածքներ: Հայաստանի Հանրապետության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ ցուցարարները բռնությամբ տարվեցին ՀՀ Ոստիկանության ներքին զորքերի զորանոցներ և ապօրինաբար անազատության մեջ պահվեցին, որը շատերի կողմից համեմատվեց Չիլիի բռնապետ Աուգուստո Պինոչետի կողմից քաղաքացիներին ստադիոնում պահելու դեպքի հետ:

Որպես կանոն հավաքների մասնակիցների նկատմամբ բռնություն կիրառած կամ այլ կերպ նրանց իրավունքները ոտնահարած ոստիկանության ծառայողները պատասխանատվության չեն ենթարկվում: Այս առումով հարկ է նշել, որ դեռևս 2012թ. ստեղծվեց Ոստիկանության կարգապահական հանձնաժողով, որի կազմում կարող են ընգրկվել նաև 5 հասարակական

¹¹ Տե՛ս 3

¹² «Մարդու իրավունքների խախտումները Էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ», զեկույց, ՅԶԱ Վանաձորի գրասենյակ, <http://hcav.am/publications/25-06-2015/>



կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանում էր ՀՀ Կառավարությունը, մինչդեռ 2016թ. մարտի 31-ի որոշմամբ Կառավարությունն այդ լիազորությունը փոխանցեց ՀՀ ոստիկանապետին: Այս փոփոխությունը շահերի բախում կարող է առաջացնել՝ էլ ավելի նվազեցնելով հանձնաժողովի անկախությունը: Հատկանշական է, որ ոստիկանական բռնությունների ալիքներից հետո՝ 2016թ. դեկտեմբերին, Սերժ Սարգսյանի հրամանագրով ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին տրվեց գեներալ-գնդապետի կոչում, իսկ ոստիկանության ներքին գորքերի հրամանատար Լյովա Երանոսյանը պարզևատրվեց շքանշանով:

Վերջին շրջանում ուժեղացել է նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատմամբ հակաքարոզությունը, հատկապես ռուսական աղբյուրներից սնվող կազմակերպությունների կողմից և Եվրամիություն-Հայաստան համաձայնագրի հնարավոր ստորագրման նախաշեմին: Հիշենք, որ այս առումով պաշտոնական դիրքորոշում է հնչեցվել նաև ՀՀ-ում ՌԴ դեսպան Ի. Վոլինկինի կողմից, ով 2014թ. հայտարարել է, որ պետք է «զբաղվել Հայաստանում գործող այն հասարակական կազմակերպությունների չեզոքացմամբ, որոնք ցանկանում են սեպ խրել ռուս – հայկական հարաբերություններում»:

Այսպիսով՝ 2013թ. սկսած Հայաստանում զգալի հետընթաց արձանագրվեց մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության բնագավառում: Կեղծիքներով և խախտումներով անցկացվեցին Սահմանադրական հանրաքվեն, Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունները: Հայաստանը դարձավ խորհրդարանական հանրապետություն, որում էլ ավելի ամրապնդվեց մեկ կուսակցության գերիշխող դիրքը և մեկ անձի իշխանությունը: Մի շարք ընդդիմադիր գործիչներ ենթարկվեցին և շարունակում են ենթարկվել հետապնդումների: Քաղաքացիական ակտիվության դեպքերը հանդիպեցին իրավապահ մարմինների կոշտ արձագանքին և ճնշումներին, էլ ավելի սահմանափակվեց ոչ պետական կազմակերպությունների և նախաձեռնությունների գործունեության տարածքը: Այրիլյան պատերազմը հանգեցրեց մեծ թվով մարդկային կորուստների՝ ցույց տալով արտաքին փտանգների հետ կապված երկրի խոցելիությունը: Այս բոլոր գործընթացները տեղի են ունեցել անպատժելիության մթնոլորտում: Զուգահեռաբար իշխանությունների կողմից ձեռնարկված բարեփոխումների քայլերը իմիտացիոն բնույթ են կրում կամ ուղղված են քաղաքացիների սոցիալական բեռը ծանրացնելու միջոցով խնդիրների լուծմանը, այլ ոչ թե ներհամակարգային փոփոխությունների:

2015թ. դեկտեմբերին տրվել է ՀՀ-ԵՄ բանակցությունների նոր փուլի մեկնարկը: Ասոցացման համաձայնագիրը նախաստորագրվեց 2017թ. մարտին: Ակնկալվում է, որ այն կստորագրվի 2017թ.-ի նոյեմբերին, սակայն իշխանությունների ցուցաբերած անկանխատեսելիությունը անորոշություն է ստեղծում նաև ՀՀ-ԵՄ հարաբերություններում սպասվող զարգացումների տեսանկյունից, նույնիսկ համաձայնագրի ստորագրումից հետո:



Հեղինակներ՝

Արթուր Սաքունց, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար

*Վարդինե Գրիգորյան, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի
Ժողովրդավարական ինստիտուտների մշտադիտարկման և զեկուցման
համակարգող*

*Անուշ Համբարյան, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի
Ժողովրդավարական ինստիտուտների մշտադիտարկման և զեկուցման
մասնագետ*